

Հուլիսի 24-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը և մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի բաժնի պետ Ս. Դավթյանը այցելեցին Կապանի տարածաշրջանի Շիկահող գյուղական համայնք՝ Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցու խաչի տեղադրման կապակցությամբ:

Խաչի տեղադրումը իրականացվեց «Երկիր և մշակույթ» բարեգործական հասարակական կազմակերպության թվով 11 կամավորների կողմից: Կազմակերպության ամերիկյան թևի ղեկավարներ Հայկ և Հիլդա Մանջիկյանների գլխավորությամբ ԵՄԿ կամավորները 2015թ հուլիսի 13-ից 30-ը կատարել են շինարարական, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ Շիկահողի Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցում:

Վ. Դավթյանը, խոսելով կամավորների հետ, գնահատել է հայրենիքի նկատմամբ նվիրումը, սրտացավությունն ու բարեգործությունը, մաղթել հատազա հաջողություններ իրենց հայրենանվեր գործունեության մեջ:

Եկեղեցու խաչի տեղադրման, բարեկարգման աշխատանքների առաջին փուլի հաջող ավարտի առիթով ԵՄԿ կամավորների նախաձեռնությամբ Տեր Վահան քահանա Հերոյանը կատարել է մատաղի արարողություն:



